

## **Ինչպե՞ս կկիրառեի նորագույն տեխնոլոգիաները կրթության մեջ**

Մենք ապրում ենք 21-րդ դարում՝ ժամանակակից տեխնոլոգիաների դարաշրջանում, որը գալիս է ապացուցելու, որ մարդկային մտքի արագությունը կարող է գերազանցել լույսի արագությանը: Չէ որ, մարդը մտքով կարող է հասնել տիեզերք, և մարդկային միտքն է արձանագրում տեխնոլոգիական նոր նվաճումներ, որոնք այսօր այնպես են հաստատվում մեր կյանքում, որ թվում է՝ առանց դրանց կյանքը չի էլ եղել:

Մեր օրերում չկա մի այնպիսի բնագավառ, որը գործում է առանց տեխնիկայի, մասնավորապես նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Սակայն պետք է հաշվի առնել, որ կրթությունն է հանդիսանում բոլոր բնագավառների հիմքը: Կրթությունը երկրի ամենակարևոր ոլորտներից մեկն է, և սերնդի կրթության որակից կախված է երկրի ապագան և զարգացումը: Ուստիև անհրաժեշտ է շեշտը դնել կրթության ոլորտի զարգացման և այդ ոլորտում վերափոխումների իրականացման վրա: Մեր օրերում սովորողների և հասկապես երեխաների մեջ դժվար է սերմանել կրթության հանդեպ սեր, հետաքրքրություն դեպի գիտելիքների անծայնրածիր աշխարհը: Սակայն յուրաքանչյուր խնդրի համար կարելի է գտնել արդյունավետ լուծում: Նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը կրթության ոլորտում կարող է ծառայել վերոնշյալ խնդրի լուծմանը՝ նպաստելով ուսումնառության կյանքի ավելի վառ, պատկերավոր և մատչելի մատուցմանը:

Ներկայումս տեխնոլոգիաները իրենց կիրառությունն են գտել ուսումնական հաստատություններում: Դասապրոցեսի ընթացքում կիրառվում են համակարգիչներ, հեռուստացույցներ, պրոյեկտորներ, ինտերակտիվ գրատախտակներ և պլանշետներ և այլ տեխնիկա: Կարելի է նաև գնալ ավելի հեռուն՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ: Գուցեն իմ մտքերն ու առաջարկները հնչեն չափազանց ֆանտաստիկ, բայց անհնարին ոչինչ չկա, եթե կա նպատակ: Ժամանակին, երբ չեխ գրողը խոսում էր ֆանտաստիկ ռոբոտի մասին, իսկ ժյուլ Վեռնը՝ սուզանավի մասին, Լեոնարդո դա Վինչին նախագծում էր առաջին ինքնաթիռը, ոչ ոք չէր պատկերացնում, որ այդ ամենը մի օր իրականություն է դառնալու:

Այսպիսով՝ ահա իմ առաջարկները՝

- Զոլոգրաֆիայի կիրառումը կրթության ոլորտում: Կարծում եմ՝ այս մեթոդը կլինի արդյունավետ: Օբյեկտների ծավալային պատկերումը կշարժի հետաքրքրությունը, նաև կզարգացնի տարածական մտածողությունն ու տեսողական հիշողությունը: Օրինակ՝ այս մեթոդով կարելի է անցկացնել կենսաբանության դասաժամերը՝ մարդու օրգանները, նրանց աշխատանքը, նաև տարբեր կենդանի օրգանիզմների կազմությունը, կենսաբանական գործընթացները հոլոգրաֆիայի միջոցով ներկայացնելով:
- Դասապրոցեսի ընթացքում կարելի է կիրառել հատուկ պլանշետներ իրենց գրիչներով, որոնք ծրագրավորված լինեն հետևյալ սկզբունքով. որևէ սխալ բան գրելու դեպքում, կլինի դա ուղղագրական, քերականական սխալ կամ մաթեմատիկական խնդիրների մեջ թվի սխալ, սխալ գրվածը կփոխի իր գույնը՝ որպես զգուշացում:

Աշակերտը հնարավորություն կունենա ուղղելու այնքան, մինչև գրի ճիշտը: Մեթոդը կօգնի աշակերտներին տրամաբանելու և վերլուծելու սեփական սխալները:

- 3D և 7D տեխնոլոգիաների կիրառումը: Այս մեթոդի շնորհիվ հնարավոր է տեղափոխվել վիրտուալ իրականություն: Օրինակ գրականության դասերին, կիրառելով վերոնշյալ մեթոդը, այս կամ այն գրողի մասին անցնելիս երեխաները հնարավորություն կունենան տեխափոխվելու նրա թանգարան, իսկ ուսուցիչը կլինի երեխաների ուղեկցորդն այդ վիրտուալ թանգարանում: Մեթոդը կարելի է կիրառել թե՛ աշխարհագրության, թե՛ պատմության դասերին՝ ստեղծելով տվյալն երկրի կամ պատմական որևէ իրադարձության մասին համապատասխան կյուբեր: Դա հնարավորություն կընձեռնի առավել տպավորիչ պատկերացում կազմելու տվյալ երկրի, նրա բնակչության, մշակույթի, կենցաղի կամ պատմական տվյալ ժամանակաշրջանի մասին:

- Օնլայն լաբորատորիաների ստեղծումը: Գաղտնիք չէ, որ այժմ դպրոցների մեծամասնությունն ապահովված չէ քիմիական և ֆիզիկական լաբորատորիաներով, ինչը խոչընդոտում է ուսումնական կյուբի մատչելիությանը: Դրա համար կարելի է խառը իրականության միջոցով համակարգիչներում ստեղծել օնլայն լաբորատորիաներ, որտեղ հնարավոր կլինի իրականացնել քիմիական ռեակցիաներ, նաև շոշափել կյուբերը, զգալ դրանց հոտը:

- Դեսպան-թարգմանիչ սարքերի օգտագործումը: Փորձի փոխանակման համար հաճախ են արտերկրից մասնագետներ հրավիրվում, սակայն օտար լեզուների լիարժեք չտիրապետելը կարող է խանգարել նմանատիպ ծրագրերի իրականացմանը: Դրա համար կարելի է օգտագործել դեսպան-թարգմանիչ սարքեր, որոնց նախագծումը վերջերս է սկսվել:

Վառ երևակայությունն է ծնում գիտության նվաճումներ, որոնք պետք է ծառայեն մարդկային բարօրությանը, լավագույն կրթությանը: Հուսով եմ, որ այս մրցույթի արդյունքում կլինեն նորարարություններ, որոնք մեր կրթությունը կդարձնեն ավելի լավը: